


ՄԻ ՆՈՐ ՍԵՊԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Այս արձանագրութիւնը գտնուել է Սասունի մի տւերակ եկեղեցու փլատակներից մէկի վերայ: Գտնողը ձեռքին լուսանկար գործիք չէ ունեցել և ահա այսպէս

կարողացել է ընդօրինակել: Մենք լառաջ ենք բերում Փարիզում նորա ընդօրինակութիւնից վերցուած լուսանկարը:

Պ. Հրաչեայ

Աճառեանը գտնում է այդ արձանագրութիւնը փորագրուած երկու տարբեր քւերի վերայ, որոնք միմեանց կցուած են հակառակ կողմով և կոտրած են երեւում, որովհետեւ արձանագրութիւնը չի սկսւում «Ան խալդինի»



սովորական բառերով: Վերծանումը դժուարանում է ա-

ւելի նորանով, որ տառերը շատ վատ են ընդօրինակած։
Պ. Աճառեանը տողէտող վերծանելով՝ այսպէս է կար-
գում։

- 1) ա—րու
- 2) նի—րու—ա
- 3) Երկիր Ուր—մէ—ի—է Աստուածները
- 4) Խաուրի (մարդու անուն) Ա—նի
- 5) Երկիր Ուրմէ—ի ծառեր
- 6) Մա—րու—ու—բի Աստուածն Արդինի
- 7) Ի—նի արձանագրութիւն լէ—ղի—ի
- 8)

Եթէ քարի կոտրած մասը լրացնենք երևակայու-
թեամբ՝ պակասները փակագծի մէջ դնելով, կստացուի
հետեւեալ միտքը. «Ես այս ինչ թագաւոր նուաճեցի
Ուրմիոյ գաւառը կամ երկիրը Աստուածների օգնու-
թեամբ (...)

Ուրմիոյ ծառաշատ երկիրը (...) Թող
Աստուածն Արդինի (պատժի նրան ով) այս արձանա-
գրութիւնը կեղծանէ»։

Երկրորդ քարի արձանագրութիւնից, որ աւելի վատ
է ընդօրինակուած, կարելի է կարդալ միայն հետեւեալը։

- 1) լե
- 2) . . ա—բի—է—նի
- 3) (մարդ) Մե—նու—ա—նի մէ—է—ի
- 4) (մարդ) իշ—պու—ու—նի երկիր Գա—մա—ու—ու
- 5) . . նի—թու—ու—բի....
- 6) Խալ—դի—ի—նի նի
- 7) նի—լի
- 8) դի—ի

Որից կարելի է հասկանալ, թէ արձանագրութեան
հեղինակն է Մենուաս թագաւորը, որդի Իշպուինի,
որ նուաճել է Գամաու երկիրը Խալդեան աստուածնե-
րի օգնութեամբ։

Աւելի ճիշտ եզրակացութեանց յանգելու համար՝
մնում է վերջնել առտեղեալն բուն արձանագրութիւն-
ների լուսանկարը և այդպէս ներկայացնել գիտնական-
ների ուղղորդութեան։